

ՏԻՐՈՒՄԻՒՄԻ

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ՄԻԱԲԱՆ ԳՐԻԳՈՐ ՍԱՆՈՍԵԱՆԻ

(1894 — 1966)

Ս. Աթոռու զիշտ ունեցաւ կորսնցնելու իր վաստակաւոր աշխատաւոր միարաններէն Գրիգոր Սանոսեանը, Ռուբաթ, 17 Յունիս 1966, յետ կարճա-աեւ հիւանդութեան :

Գրիգոր Սանոսեանը ծնած էր 1894ին, Ալեք մէջ, եւ տարազրութեան ընթացքին հաստատուած եղիպտոս, Գահիրէ, ուր կ'ապրէ համեստ կեանք մը, երբ իր մասնաւոր փափաքին վրայ 1936ին՝ կ'ընդունուի Ս. Աթոռոյ վար-չութեան կողմէ՝ ի շարա աշխատաւոր միարաններու եւ 12 Դեկտ. 1936-ին կը ժամանէ Ս. Աթոռ եւ Գաստ. Տնօրէն ժողովի կողմէ կը զրկուի Ս. Ծննդեան Վանքը, ուր կը ծառայէ մինչեւ 1940, երբ կը փոխադրուի Ս. Փրկչաց Վանքը եւ կ'ըլլայ զպիր եւ փոխասաց մասնակցելով հանապազօրեայ Ս. Վասուու-ծածնայ պատարագին, մինչեւ իր մահէն երկու տարիներ առաջ, երբ յառաջա-ցած տարիից եւ հիւանդապին վիճակի հետևանքով կը դադրի այդ պարտակա-նութեան կատարումէն :

Գրիգոր Սանոսեան քաջ ընթերցող եւ քաղցրաձայն զպիր էր միանդա-մայ, եւ իր պարտականութիւնը խոճի մտօք կատարող եւ ծառայասէր միարան մը :

Իր թաղումը կը կատարուի նոյն օրը, երեկոյեան ժամերդութենէն ետք, նախազահութեամբ Գերշ. Լուսարարապետ Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի եւ մասնակցութեամբ բովանդակ Միարանութեան ու մարմինը կ'ամփոփուի Զամ-Թաղի պուրակ-դերեզմանատու՞ց :

Հանդիսաւ իր հոգւոյն :